ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՒՎԵՐԵՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԾԱԳՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Ա. Զ. ԲԵԳԻՅԱՆ

Քառասուն տարի առաջ՝ 1920 թ. նոյեմբերի 29-ին Հայաստանի աշխատավորության ազատագրական պայքարը պսակվեց պատմական հաղթանակով։ Հայ ժողովուրդն իր երկիրը մեկընդմիշտ ազատեց դաշնակներից և նրանց իմպերիալիստական տերերից, ստեղծեց իր ազատ, անկախ սովետական պետությունը։ Շնորհիվ ռուս մեծ ժողովրդի և մեր երկրի մյուս ժողովուրդների օգնության, Հայաստանը ցարական Ռուսաստանի իրավազուրկ և հետամնաց ազգային ծայրագավառից, որբերի, արցունքի, աղքատության և վայրենի կամայականության երկրից, ինչպիսին էր նա դաշնակների օրոք, դարձավ ազատ և իրավահավասար, բազմակողմանիորեն զարդացած սովետական ռեսպուբլիկա, որը Սովետական Միության մյուս ռեսպուբլիկաների հետ միասին կոմունիստական հասարակություն է կառուցում։

Հայկական ՍՍՌ-ի ստեղծումը ազգային հարցի մասին լենինիզմի քաղաքականության տեսության և ծրագրի իրագործման վառ արտահայտությունն է, մեր երկրում ազգային հարցի պետական-իրավական ձևերի լենինյան ուսմունքի հաղթանակը։

Սովետական Հայաստանը, ստեղծվելով որպես անկախ պետություն, ազատ և ուժեղ դարձավ ոչ միայն նոր հասարակական և պետական կառուցվածքի շնորհիվ, այլև մյուս բոլոր եղբայրական ռեսպուբլիկաների և առաջին հերթին իր անկախության գրավականի՝ Սովետական Ռուսաստանի հետ ունեցած բարեկամության։ Հայաստանի և ՌՍՖՍՌ կապի հարցը բուրժուական թերթերի էջերից չէր իջնում։ Ամերիկյան «Նյու Ֆասա» լիբերալ թերթը գրում էր, որ հայերը իրենց օգտին արված բոլշևիկյան քայլերը կհամեմատեն օգնության այն խոստումների և համակրանքի դատարկ այն արտահայտությունների հետ, որ մատուցում էր նրանց Եվրոպան[1]։ Նրանք իրոք այդպիսի համեմատություն էին անում, և իհարկե, ոչ հօգուտ իմպերիալիստների, որոնց տնօրինության օրոք Հայաստանի աշխատավորությունը զրկված էր դեմոկրատական իրավունքներից, ազգային ազատություններից, իսկ Հայաստանը ամբողջությամբ վերցրած՝ անկախությունից։

Սովետական իշխանության հաստատումից հետո Հայաստանը դարձավ Արևմուտքի ռեակցիոն շրջանների կատաղի կամպանիայի առարկա։ Ամերիկյան կոնգրեսմեններն ու դեներալները պահանջում էին Հայաստանի դեմ ինտերվենցիա կազմակերպել, տապալել Սովետական իշխանությունը։ «Կոմունիստ» թերթը 1920 թ. դեկտեմբերի 12-ին հայտնում էր, որ ԱՄՆ-ը որոշել

---

[1] „New Fast". 9 December. 1920.

է Տրապիզոնում և Բաթումում կանգնած ամերիկյան նավատորմին որպես օգնություն ուղարկել «Սենտ-Լյունգ» զրահապատը և երեք ականակիրներ։ Ադրբեջանական և հայ ժողովուրդներին սպառնալով նրանք հիշեցնում էին, որ Սև ծովի ջրերում է գտնվում ամերիկյան ռազմական նավատորմը, որը հսկում է Բաթումի ափերը[1]։ Ֆրանսիայի գերագույն կոմիսար Շեվալյեն 1920 թ. դեկտեմբերի 16-ին Վրաստանի հեռագրական գործակալության աշխատակցի հետ ունեցած զրույցի ժամանակ հայտարարեց. «Ամբողջ աշխարհի շահերը պահանջում են տասալել Սովետական իշխանությունը Հայաստանում և Ադրբեջանում»։ Նման կոչեր էին արվում նաև իմպերիալիստական մյուս երկրների ներկայացուցիչների կողմից։ Միայն Սովետական Ռուսաստանի ռազմա-քաղաքական լուրջ օգնությունն էր, որ կարողացավ Հայաստանը փրկել ազգային անկախությունն ու ինքնուրույնությունը կորցնելուց։

ՌՍՖՍՌ-ն հանդես եկավ Հայաստանին աջակցելու և նրա ինքնուրույնությունը պաշտպանելու ընդարձակ ծրագրով, ճանաչեց նրա անկախությունը և որպես դաշնակից, Հայաստանի խնդրանքով, զինված ուժեր հատկացրեց նրա անկախությունը պաշտպանելու համար։

Կատարելով իր դաշնակցային պարտավորությունները, Ռուսաստանը ապահովեց Սովետական Հայաստանի խաղաղ գոյությունը, նրա ժողովրդին հնարավորություն տվեց իր ուժերը կենտրոնացնել Հայկական ՍՍՌ-ի ազատ և անկախ կյանքի կառուցման համար։

Ինտերվենցիայի սպառնալիքը վերացնելու համար Հայաստանին ցույց տրված օգնության հետ մեկտեղ, Հայաստանի համար կենսական կարևորություն ուներ նաև ՌՍՖՍՌ-ի տնտեսական օգնությունը։

Հայաստանը պետք է վերացներ դաշնակցականների և օտարերկրյա զավթիչների տնօրինության ծանր հետևանքները։ Սովետական իշխանության հաստատման պահին Հայաստանում կար 200 հազար գաղթական, 50 հազար որբ, բայց ո՛չ հաց կար, ո՛չ հագուստ, ո՛չ վառելիք, ո՛չ հիվանդանոց, և ո՛չ էլ դեղորայք։

1920 թվականի դեկտեմբերի 12-ին, Հայաստանի Հեղկոմի պատվիրակության ընդունելության ժամանակ, լսելով Ա. Մռավյանի և Ս. Տեր-Բարրիելյանի հաղորդումները հայ ժողովրդի ծանր վիճակի մասին, Վ. Ի. Լենինը ասաց. «Սովետական Հայաստանին կօգնենք այն ամենով, ինչով կարող ենք, կօգնե՛նք»։

Վ. Ի. Լենինի ցուցումով ՌՍՖՍՌ Պարենամթերքի կոմիսարիատը, 1920 թ. վերջին և 1921 թ. սկզբներին, Հայաստան ուղարկեց 40 վագոն առաջին անհրաժեշտության ապրանքներ, 12 վագոն դեղորայք, 325 հազար փութ հացահատիկ, 7 վագոն բրինձ, 5 հազար փութ շաքար, 1500 գլուխ անասուն, 36 հազար զույգ սպիտակեղեն, ավելի քան 1 միլիոն 200 հազար փութ նավթ և բենզին։ Սովետական Ադրբեջանը Հայաստանին նվեր ուղարկեց 50 վագոն հաց, անվճար կերպով նրան հանձնեց 36 հազար տոննա նավթ։ Հետագայում Սովետական Ռուսաստանի օգնությունը անընդհատ աճում էր։

---

[1] Տե՛ս «Կոմունիստ» օրաթերթը (Բաքու), 12 դեկտեմբերի, 1920։

[2] Г. В. Хачапуридзе, Большевики Грузии в боях за победу Советской власти, Москва, 1947 էջ 226։

[3] «Խորհրդային Հայաստան», 29 Նոյեմբերի, 1925։

1921 թ. Հայաստանը ՌՍՖՍՌ-ից ստացավ մեծ քանակությամբ զանազան մթերքներ և անվերադարձ կերպով՝ 3,5 միլիոն ռուբլի ոսկով։ ՌՍՖՍՌ-ի, Ադրբեջանի և մյուս ռեսպուբլիկաների օգնությունը հայ ժողովրդին փրկեց սովից, Հայաստանը զերծ պահեց կապիտալիստական կախվածությունից, ամրապնդեց նրա սովետենությունը։

Այդ շրջանում ՌՍՖՍՌ-ն Հայաստանին մեծ օգնություն էր ցույց տալիս նրա քայքայված տնտեսությունը վերականգնելու համար։ Ղեկավարվելով լենինյան ազգային քաղաքականությամբ, պարտիայի X և XII համագումարների որոշումներով, ռեսպուբլիկայի քայքայված տնտեսությունը վերականգնելու և մինչ այդ գոյություն չունեցող արտադրական նոր ձեռնարկությունների շինարարության համար ՌՍՖՍՌ-ն Հայաստան էր ուղարկում շինանյութեր, սարքավորումներ և դրամ։ Նրա օգնությամբ 1922 թվականին Հայաստանում ստեղծվեց պոլիգրաֆ արդյունաբերություն, սկիզբ դրվեց տեքստիլ արդյունաբերությանն ու էլեկտրիֆիկացիային։

Վ. Ի. Լենինը «Ադրբեջանի, Վրաստանի, Դաղստանի, Հայաստանի, Լեռնականների ռեսպուբլիկայի ընկեր կոմունիստներին» ուղղած նամակում, 1921 թ. ապրիլին խորհուրդ էր տալիս ոռոգման ուղղությամբ խոշոր աշխատանքներ սկսելու։ «Ոռոգումը,— գրում էր Վ. Ի. Լենինը,— ամենից ավելի պետք է և ամենից ավելի կվերաստեղծի երկիրը, կվերածնի նրան, կթաղի անցյալը, կամրապնդի անցումը դեպի սոցիալիզմ»[1]։

Ղեկավարվելով Վ. Ի. Լենինի ցուցումներով, Հայաստանում սկսվեց ոռոգիչ սիստեմի վերականգնումը։ 1921 թ. արդեն վերականգնվել ու վերակառուցվել էր 18 ջրանցք և սկսվել էր Էջմիածնի ոռոգիչ սիստեմի վերականգնումը, որը շարք մտավ Խորհուրդների համահայաստանյան երկրորդ համագումարի բացման օրը՝ 1922 թ. նոյեմբերի 29-ին։

Հայաստանի բամբակագործության վերականգնումն ու հետագա զարգացումը մեծապես պայմանավորված էին ոռոգման սիստեմի վիճակով։ Վ. Ի. Լենինը այդ հարցին լուրջ ուշադրություն էր դարձնում։ ՌՍՖՍՌ Աշխատանքի և պաշտպանության խորհրդի 1922 թ. հոկտեմբերի նիստում քննարկվեց Հայաստանի բամբակագործության զարգացման համար հատկացումներ անելու հարցը և որոշվեց այդ նպատակի համար առանձնացնել 375 հազար ռուբլի[2]։ Վ. Ի. Լենինը հոկտեմբերի վերջին ԱՊԽ-ի գործերի կառավարիչ Վ. Ա. Սմոլյանինովին հղած գրության մեջ ընդգծում էր, որ «պետք է ավելի ուժգին տեղից շարժել բամբակի հարցը Կովկասում, Ադրբեջանում (Մուղանի դաշտ) և Հայաստանում»։ Ընդ որում, Վ. Ի. Լենինը խնդրում էր հետևել «...որպեսզի Պետրանկը վարկը ավելի շուտ և ավելի ձեռնտու պայմաններով բաց թողնի»[3]։

Վարկավորումը և դրամական օգնությունը Հայկական ՍՍՌ-ին հնարավորություն տվեցին դուրս գալու այն կատաստրոֆիկ վիճակից, որի մեջ նրան գցել էին դաշնակները։

Հայաստանի վերածննդի, նրան օտարերկրյա կախումից զերծ պահելու գործում մեծ դեր կատարեց Սովետական Ռուսաստանի և Հայկական ՍՍՌ-ի

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 32, Երևան, 1952, էջ 403։
[2] Տե՛ս ЦГАОР и СС, ф. 2281, оп. 2, д. 2000, л. 103.
[3] „Ленинский сборник", XXIII, Партиздат, М., 1933, էջ 48։

միջև 1921 թ. սեպտեմբերի 20-ին կնքված ֆինանսա-տնտեսական համաձայնագիրը։ Այն Հայաստանի անկախության տնտեսական երաշխիքն էր։

Ինչպես նշվեց, հայ ազգի անկախության, նրա պետական ինքնուրույնության նվաճումը հայ ժողովրդի խոշորագույն հաղթանակն էր։ Բայց ազգային ազատությունն ու անկախությունը ոչ միայն պետք է նվաճվեր, այլև ամրապնդվեր, զարգացվեր։ Հայաստանի աշխատավորները բոլոր ուժերով ձեռնամուխ եղան Սովետական իշխանության ամրապնդմանն ու զարգացմանը, իրենց ազգային պետության ինքնուրույնությանը։ Նրանք խորտակեցին պետական հին ապարատը և նրա փոխարեն ստեղծեցին Սովետական ապարատ, ազգայնացրին բանկերը, արդյունաբերական խոշոր ձեռնարկությունները, հողը, նրա ընդերքը, ջրերը և անտառները։ Հայաստանը օտարերկրյա պետությունների կախումից ազատագրելու համար ազգայնացվեց ռեսպուբլիկայի տերիտորիայով անցնող Հնդկա-Եվրոպական հեռագրագիծը, չեղյալ համարվեցին օտարերկրյա փոխառությունները և Անտանտի նկատմամբ Հայաստանի ստանձնած վասալային մյուս պարտավորությունները։

Այս միջոցառումներով ստեղծվեցին և ամրապնդվեցին Հայաստանի ազատության և անկախության քաղաքական և տնտեսական հիմքերը։

Հայկական Սովետական սոցիալիստական պետության ամրապնդման և զարգացման պրոցեսում Հայաստանը վերականգնեց Ալեքսանդրոպոլի և Լոռու շրջանների նկատմամբ ունեցած իր իրավունքները։

Այս բոլոր միջոցառումները արժանացան Հայաստանի աշխատավորության ջերմ հավանությանը, որը պատրաստ էր իր ռեսպուբլիկայի, նրա արտադրական ուժերի վերածնության համար ներդնել իր բոլոր ջանքերը։

Հայաստանի քաղաքական և տնտեսական վերափոխումների արդյունքը և դրա վառ արտահայտությունը հանդիսացավ խորհուրդների առաջին համագումարը (1922) և նրա ընդունած Հայկական ՍՍՌ կոնստիտուցիան, որը Սովետական իշխանության և երկրի ինքնուրույնության ամրապնդման մի նոր գործոն էր։

Կոնստիտուցիան հանրագումարի բերեց և օրենսդրորեն ամրապնդեց այն ամենը, ինչ հայ ժողովուրդը նվաճել էր գաշնակների դիկտատուրան տապալելու և օտարերկրյա իմպերիալիստների լծից ազատագրվելու շնորհիվ։

Խորհուրդների համագումարի և կոնստիտուցիայի կարևորագույն նշանակությունն այն էր, որ Հայաստանի բանվորների և գյուղացիների սոցիալիստական նվաճումների օրենսդրական ամրապնդման հետ մեկտեղ, ամրապնդվեցին նաև նրանց ազգային նվաճումները։ Խորհուրդների համագումարը օրենսդրաբար հաստատեց Հայկական Սովետական սոցիալիստական պետության կազմակերպման փաստը և նրա հետագա ամրապնդման ու զարգացման ուղղությամբ մի շարք կարևոր որոշումներ ընդունեց։

Սովետական Հայաստանը իմպերիալիստական պետություններից լիովին անկախ էր, ուրիշ պետությունների թույլ չէր տալիս խառնվելու իր գործերին։ Այլ էր վիճակը գաշնակների օրոք։ Հայաստանի վրա ամերիկյան մանդատի տարածման առթիվ 1919 թվականի հունիսի 30-ին կայացած համաձայնագրով Հայաստանի յուրաքանչյուր միսիստրին կցվել էր ԱՄՆ-ի մեկական խորհրդատու, որը նրանց գործունեությանը միջամտելու, օրենքների և այլ

ակտերի նախագծեր առաջարկելու, ընդունվածները վերացնելու և այլ կարգի անսահմանափակ իրավունքներ ուներ[1]։

Խորհուրդների համագումարի հրատարակած օրենքներն ու պետական կառավարման այլ ակտերը ուրիշ որևէ իշխանության կողմից չէին կարող վերացվել կամ փոփոխվել. ռեսպուբլիկայի իշխանության բոլոր օրգանները նրանց էին ենթարկվում։ Հայկական ՍՍՌ-ն իրեն, կամ սուվերեն հայ ժողովրդին իր կամքը թելադրելու փորձ անող որևէ այլ իշխանություն չէր ընդունում և այդպիսիներին թույլ չէր տալիս իր տերիտորիայի վրա գտնվելու։ Այլ խոսքով, Հայաստանի սուվերենությունը իրենից ներկայացնում էր երկրում հաստատված անսահմանափակ իշխանություն, որը գործում էր ոչ միայն երկրի ներսում, այլև նրա արտաքին հարաբերությունների բնագավառում։ Նա սովետական ռեսպուբլիկաների, ինչպես և արտասահմանյան պետությունների հետ առևտրական պայմանագրեր էր կնքում։ Որպես սուվերեն պետություն, նա միջազգային հարաբերություններում հանդես էր գալիս հայ ազգի իրավունքների միակ ներկայացուցչի դերում։ Կոնստիտուցիան (տե՛ս 37-րդ կետ) օրենսդրական կարգով նրան իրավունք էր տվել արտասահմանյան պետությունների հետ հարաբերություններ հաստատել, այդ իրավունքը թողնելով Հայաստանի Խորհուրդների համագումարի և Կենտգործկոմի իրավասությանը։

Որպես միջազգային իրավունքի ինքնուրույն սուբյեկտ, Սովետական Հայաստանը չեղյալ հայտարարեց դաշնակցական կառավարության կնքած բոլոր միջազգային իրավական ակտերը, որոնք արվել էին առանց նրա գիտության, մասնակցության կամ համաձայնության։

Հայաստանի Ռևկոմը 1920 թ. դեկտեմբերի 3-ին ռեսպուբլիկայի նախկին պատվիրակության նախագահ Ա. Խատիսյանին հայտնեց, որ Հայկական ՍՍՌ հռչակման պահից հին կառավարության նշանակած պատվիրակությունը ոչ մի իրավունք և լիազորություն չունի։

Հայկական ՍՍՌ կառավարությունը հաստավ այն բանին, որ թուրքական կառավարությունը Ղարսի պայմանագրով ընդունեց դաշնակցական և թուրքական կառավարությունների միջև կնքած բոլոր պայմանագրերի անվավեր լինելը և այն, որ նա Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի կառավարությունների կնքած պայմանագրերից բացի, նրանց վերաբերող որևէ այլ միջազգային ակտ չի ընդունում (տե՛ս պայմանագրի I և II հատվածները)։

Հայաստանի Սովետական կառավարությունը հանդիսանում էր նրա միակ օրինական կառավարությունը, որը երկրի ներսում և նրանից դուրս ներկայացնում էր հայ ժողովրդին։ Նա վճռականապես բողոքում էր մերթ այստեղ, մերթ այնտեղ կազմակերպվող դաշնակցական կառավարությունների դեմ, որոնք իբր թե ներկայացնում էին հայ ժողովրդին, չճանաչեց Ղանդեզուրում Այունիքի կառավարության կազմակերպումը (որը հետագայում վերանվանվեց Լեռնային Հայաստանի կառավարություն), բողոքեց դաշնակցական կառավարության փախած ղեկավարների կողմից 1922 թ. Թավրիզում (Պարսկաստան) հայկական կառավարություն կազմակերպելու դեմ։

Պարսկաստանում ՌՍՖՍՌ լիազորված ներկայացչությունը, միակ օրինական կառավարությունը համարելով հայկական Սովետական իշխանությու-

[1] Տե՛ս Հայաստանի Պետական պատմական արխիվ, ֆ. 68/200, գ. 96, էջ 114, 115։

նը և միանգամայն արդարացի համարելով նրա բողոքը դաշնակների նորահայտ կառավարության Պարսկաստանում գտնվելու առթիվ, իր բողոքի նոտայում Պարսկաստանի արտգործմինիստրությանը ցույց էր տալիս նշված կառավարության ապօրինի գոյությունն ու գործունեությունը Թավրիզում և առաջարկում էր հեռացնել նրան Պարսկաստանի տերիտորիայից[1]։

Հետագայում, Անդրֆեդերացիայի և ՍՍՌՄ կազմակերպմամբ, երբ Հայկական ՍՍՌ Արտգործժողկոմատը լուծարքի ենթարկվեց, Հայաստանը չզբաղվեց իր համար էական նշանակություն ունեցող հարցերի լուծման վրա ազդելու հնարավորությունից։ Այսպես, օրինակ, Պարսկաստանում և Թուրքիայում Հայկական ՍՍՌ շահերը ուսումնասիրելու նպատակով, Հայաստանի ներկայացուցիչները որպես քարտուղարներ ընդգրկվեցին Թավրիզի և Սպահանի ՍՍՌՄ ներկայացչությունների մեջ։ Նրանք նշանակվում էին Հայկական ՍՍՌ Ժողկոմխորհի կողմից և հաստատվում ՍՍՌՄ Անդրգործժողկոմատի կոլեգիայի կողմից։ 1923 թ. Պարսկաստանում սովետական դեսպանությանը կից ստեղծվեց հայկական գործերի քարտուղարություն։

Հայաստանի աշխատավորությունը իր պետության կառուցման և ամրապնդման ընթացքում ավելի ու ավելի էր համոզվում, որ իր իսկական սուվերենությունը, իր երկրի արդյունաբերության, գյուղատնտեսության վերելքը հնարավոր է միայն հայ և մյուս ժողովուրդների, հատկապես Անդրկովկասի ժողովուրդների ուժերի միավորման դեպքում։ Դեռևս 1918—1920 թթ. գերմանա-թուրքական, անգլո-ամերիկյան օկուպանտների և նրանց դաշնակ օգնականների դեմ մղած իր ազատագրական պայքարի շրջանում, Հայաստանի աշխատավորությունը ազատ և սուվերեն Հայաստան ստեղծելու իր գաղափարը կապում էր մեր երկրի մյուս ժողովուրդներին միանալու ձգտման հետ։ Այդ պատճառով էլ նա հանդես էր գալիս սովետական ռեսպուբլիկաների հետ ֆեդերացիայի հիման վրա ամենասերտ կապ հաստատելու օգտին։

Հայկական և անդրկովկասյան մյուս ռեսպուբլիկաների փորձը լիովին հաստատեց Վ. Ի. Լենինի տեսական այն հետևությունը, որ Սովետական իշխանության ամրապնդման, սովետական ռեսպուբլիկաների անկախության և նրանց հետագա զարգացման համար բավական չէ միայն առանձին համաձայնությունների ձևով նրանց միասնարար հանդես գալը, այլ պահանջվում է բազմակողմանի, տնտեսական և ռազմական կուռ միասնություն։

Անդրկովկասում Սովետական իշխանության հաստատումից հետո դաշնակները, մուսավաթականներն ու վրացական մենշևիկները ամեն կերպ խանգարում էին անդրկովկասյան ռեսպուբլիկաների միջև կապ և բարեկամություն հաստատելուն։ Նրանք պնդում էին, որ Անդրկովկասի ժողովուրդների միջև գոյություն ունեցող ազգային, կուլտուրական և տնտեսական տարբերությունները բացառում են նրանց պետական միավորման հնարավորությունը, որ Անդրֆեդերացիան երկրամասի վերածնության համար ազդակներ չի ստեղծում, որ նրա ժողովուրդները ասիմիլյացիայի կենթարկվեն։ Այս և բազմաթիվ այլ «փաստարկների» միջոցով նրանք ձգտում էին ապացուցել, որ հնարավոր չէ Անդրֆեդերացիա ստեղծել, իսկ եթե այն ստեղծվի էլ, հաջողություն չի ունենա։ Ֆեդերացիայի հարցում նրանք ելնում էին ամիս ու կեսից

[1] Տե՛ս Հայկական ՍՍՌ ռեոլյուցիայի պետական արխիվ, գ. 40/113, օպ. 3, գ. 57, էջ 15—16։

էլ պակաս գոյություն ունեցած Անդրկովկասյան բուրժուական ֆեդերացիայի օրինակից։ Մինչդեռ վերջինիս ձախողումը միանգամայն օրինաչափ երևույթ էր, որովհետև ֆեդերացիայի անդամների միջև որևէ վստահության, որևէ դրական աշխատանքի, ընդհանուր պլանի մասին խոսք անդամ լինել չէր կարող։

Անդրկովկասի ժողովուրդները գիտակցելով, որ արհեստական տարաձայնությունները կործանարար կերպով էին անդրադառնում նրանց ռեսպուբլիկաների տնտեսության վրա, Սովետական իշխանության հաստատմամբ բնականաբար մերձեցան։ Այդ բանին նպաստում էր Անդրկովկասի առաջավոր մարդկանց դարավոր բարեկամությունը, առանձնապես Սովետական իշխանությունը, որն իր բնույթով հակված է դեպի միավորումը, դեպի տարբեր ազգերի աշխատավոր մասսաների փոխադարձ օգնությունը։

Անդրկովկասի ժողովուրդների ջանքերի միավորումը բնական, օրինաչափ երևույթ էր։ Տնտեսական շինարարության փորձը ցույց տվեց, որ առանց երեք ռեսպուբլիկաների ջանքերի միավորման հնարավոր չէ տնտեսական կյանքում որևէ լուրջ առաջընթաց քայլ անել և որ առանց ֆեդերացիայի չի կարելի խուսափել Անդրկովկասի ժողովուրդների միջև հետագա ազգային անվստահությունից և հասնել ազգային խաղաղության։

Անդրկովկասյան ֆեդերացիան ստեղծվեց մինչև այդ գոյություն ունեցած և այժմ հայտնի բուրժուական բոլոր ֆեդերացիաներից արմատապես տարբեր հիմքերի վրա։ Անդրկովկասյան ֆեդերացիայի հիմքերի կառուցմանը պարտիան ձեռնամուխ եղավ Անդրկովկասի Սովետական իշխանության հաստատումից անմիջապես հետո։ Դրա ոգեշնչողն ու կազմակերպիչը Վ. Ի. Լենինն էր։ 1921 թ. ապրիլի 9-ին, Գ. Կ. Օրջոնիկիձեին ուղարկած հեռագրում նա ասում էր. «Համառորեն պահանջում եմ ամբողջ Անդրկովկասի համար ստեղծել մարզային տնտեսական օրգան»[1]։ Նույն ամսի 14-ին, Կումիասի կոմունիստներին հղած նամակում Վ. Ի. Լենինը կրկին հիշեցնում էր Անդրկովկասի ռեսպուբլիկաների սերտ դաշինքի անհրաժեշտության մասին։

Անդրկովկասի աշխատավորության առաջավոր մասը գիտակցում էր Անդրֆեդերացիայի ստեղծման անհրաժեշտությունը։ Պետք էր այդ գաղափարը դարձնել բոլոր աշխատավորների սեփականությունը, հաղթահարել նացիոնալիստական նախապաշարումները, մերկացնել ֆեդերացիայի հակառակորդներին, չեզոքացնել ու ջախջախել նրանց։ Այսպես, նացիոնալ-ուկլոնիստները պնդում էին, որ ռեսպուբլիկաների միավորումը «գաղութայնացում» է, նրանց սուվերենության ոչնչացում։ Նրանք առաջ քաշեցին «բացարձակ անկախության» լոզունգը։ Այդ լոզունգի հեղինակները մոռանում էին, որ իրենց կողմից փառաբանվող «անկախությունը», հատկապես դաշնակցական Հայաստանի վերաբերյալ, իր ետևում թաքցնում էր նրա լրիվ հպատակությունը մերթ այս մերթ այն արտասահմանյան պետություններին և Հայաստանում գանվող նրանց ներկայացուցիչներին։ Դաշնակների օրոր Հայաստանի պառլամենտը, կառավարությունը և մինիստրությունները փաստորեն ամերիկյան և անգլիական օկուպանտների գրասենյակներն էին, որոնք անառարկելիորեն կատարում էին նրանց բոլոր առաջադրանքները։ Մինիստրները առանց իրենց իմպերիալիստական տերերի գիտության իրավունք

Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 35, Երևան, 1952, էջ 321։

չուներին որևէ լուրջ քայլ անելու։ Բանն այնտեղ էր հասնում, որ նրանք Թիֆլիս կարող էին գալ միայն օկուպացիոն իշխանություններից երկաթուղով երթևեկելու իրավունք ստանալուց հետո։

Ա. Ի. Միկոյանը «Կովկասյան հարցի առթիվ» գրած իր թեզիսներում հետևյալ կերպ է բնութագրում անդրկովկասյան ռեսպուբլիկաների անկախությունը. «Անկախ» ռեսպուբլիկաների փոխարեն Կովկասում ստացվեց լայն ճանապարհի վրա ընկած իշևանատեղի, ավազակների կեղտոտ անառականոց, ուր մերթ հերթով, մերթ միասին գալիս են իմպերիալիզմի գիշակերները, քաղաքակրթված բանդիտները՝ մե՛րթ գերմանացիներ, մե՛րթ թուրքեր, անգլիացիներ, ամերիկացիներ, իտալացիներ ...գալիս են տերություն անում, կողոպտում, բռնանում, ծաղրելով աշխատավոր մասսաներին, և հարուստ ավարով հեռանում, իբրև շնորհակալություն թքելով անառականոցի տիրոջ կովկասյան ռեսպուբլիկաների կառավարությունների մռութին, որոնք մի տիրոջից զրկվելով, որպես անպարկեշտ զբաղմունքի տեր կանայք, որոնում են նոր տերերի»[1]։

Անդրկովկասի աշխատավորները օրեցօր համոզվում էին, որ իրենց ռեսպուբլիկաների ուժը ոչ թե նրանց անկախության արտաքին նշանների մեջ է, այլ սերտ միասնության։

Գ. Կ. Օրջոնիկիձեն, մերկացնելով «բացարձակ անկախության» լոզունգի հակասովետական էությունը, 1921 թ. նոյեմբերի 22-ին ասել է. «Այդ ռեսպուբլիկաների անկախությունը մենք հասկանում ենք որպես ամենաբացարձակ անկախություն կոնտրոնոլյուցիայից, բայց մենք բացարձակապես անհնարին ենք համարում նաև սովետական ռեսպուբլիկաների անկախությունը միմյանցից ...Առանց փոխադարձ տնտեսական և ռազմական օգնության, սովետական ռեսպուբլիկաները գոյություն ունենալ չեն կարող»[2]։

Անդրկովկասյան ռեսպուբլիկաների ֆեդերացիան, նրանց ժողովուրդների բարեկամությունը ամրապնդվել են բուրժուական նացիոնալիստների և նացիոնալ-ուկլոնիստների դեմ մղվող պայքարում։

Իրադարձությունների ողջ ընթացքը օրակարգի մեջ դրեց Անդրկովկասյան ֆեդերացիայի կազմակերպման հարցը։ ՌԿ(բ)Պ ԿԿ-ի Կովկասյան բյուրոն 1921 թ. նոյեմբերին այդ ոգով որոշում ընդունեց, որը պաշտպանեցին Անդրկովկասի կոմունիստները ու ողջ աշխատավորությունը։ Այդ հարցը քննարկվում էր աշխատավորների բազմաթիվ ժողովներում, գանգատան կոնֆերանսներում, խորհուրդների համագումարներում։

Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի խորհուրդների համագումարները, քննելով Անդրֆեդերացիայի ստեղծման հարցը, իրենց ընդունած որոշումներում միահամուռ կերպով նշում էին, որ նրա կազմակերպումը հետաձգել չի կարելի և որ այն լիովին համապատասխանում է իրենց ժողովուրդների շահերին։ Կատարելով նրանց կամքը, այդ ռեսպուբլիկաների կենտգործկոմների լիազորված կոնֆերանսը 1922 թ. մարտի 12-ին հռչակեց Անդրկովկասի Սոցիալիստական Սովետական Ռեսպուբլիկաների Ֆեդերատիվ Միությունը (ԱՍՍՌՖՄ)։

---

[1] ЦПА ИМЛ при ЦК КПСС, ф. 17, оп. 4, ед. хр. 14, էջ 42։

[2] Գ. Կ. Օրջոնիկիձե, Ընտիր հոդվածներ (1918—1937), Երևան, 1950, էջ 72։

Անդրկովկասի ժողովուրդները հսկայական գոհունակությամբ ընդունեցին այդ որոշումը։ Ռեսպուբլիկաների միավորման առաջին իսկ ամիսները ցույց տվեցին Անդրֆեդերացիայի գաղափարի ճշմարտացիությունը։ Ահա թե ինչու նրանք ոգևորությամբ ընդունեցին և ակտիվորեն պաշտպանեցին պարտիայի որոշումը՝ իրենց ավելի սերտ միավորումը կենսագործելու. ԱՍՍՌՖ-ն Անդրֆեդերացիայի վերակառուցելու և այն ՍՍՌՄ կազմի մեջ մտնելու մասին։

Անդրֆեդերացիայի և ՍՍՌՄ ստեղծումը ոչ միայն չէր նսեմացնում անդրկովկասյան ռեսպուբլիկաների անկախության նշանակությունը, այլև, ընդհակառակը, ուժեղացնում էր այն, հանդիսանում էր նրա գրավականը։

Հայկական ՍՍՌ-ն, ինչպես և Ադրբեջանական ու Վրացական ՍՍՌ-ները, կազմելով ԱՍՍՌՖՄ, իսկ այնուհետև ԱՍՖՍՌ-ն, պահպանեցին իրենց անկախությունն ու սուվերենությունը։ Ռեսպուբլիկաների նման իրավիճակը վավերացվում էր դաշնագրային պայմանագրով, որն ընդունել էր Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի ներկայացուցչական կոնֆերանսը։ Նրանում ասվում էր, որ ընդունելով Անդրկովկասի ռեսպուբլիկաների անկախությունն ու սուվերենությունը և գիտակցելով պաշտպանության ու տնտեսական շինարարության նպատակներով նրանց ուժերի համախմբման անհրաժեշտությունը, նրանք միմյանց միջև կնքում են ռազմական, քաղաքական և տնտեսական սերտ միություն[1]։

Այդ ռեսպուբլիկաների անկախությունն ու սուվերենությունը ոչ մի նշանակություն չէին ունենա, եթե դրանք խելացիորեն չօգտագործվեին անվտանգության ամրապնդման, տնտեսության, կուլտուրայի վերելքի, ժողովուրդների նյութական և կուլտուրական կյանքի զարգացման համար։

Հենց այդ նպատակով էլ միավորվեցին պետական կյանքի այն բնագավառները, որոնցում ամենաանհրաժեշտը նրանց ուժերի կենտրոնացումն էր, ինչպես ռազմական գործը, ֆինանսների, արտաքին քաղաքականության, արտաքին առևտրի բնագավառները։

Պետական կյանքի այդ կարևորագույն բնագավառների միավորումը միութենական պետության մեջ, իրագործվեց Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի ազատ արտահայտված սուվերեն կամքով։ Ընդ որում, նրանց վերապահվեց պետության սուվերեն իրավունքների այնպիսի բարձր արտահայտություն, ինչպիսին է Միությունից դուրս գալու իրավունքը։

Անդրֆեդերացիան ստեղծվում էր այնպիսի հիմքերի վրա, որոնք բացառում էին կամավորության, իրավահավասարության և փոխադարձ շահավետության սկզբունքների խախտման անգամ ամենաաննշան հնարավորությունը։

Հայկական ՍՍՌ-ն ԱՍՖՍՌ-ի մյուս ռեսպուբլիկաներին հավասար իրավունքներ ուներ։ Նա հավասարազոր մասնակցություն էր ցույց տալիս նրա բարձրագույն մարմնի՝ լիազորների կոնֆերանսի գործունեությանը։ Ադրբեջանական և Վրացական ՍՍՌ-ները, Հայկական ՍՍՌ-ի համեմատ իրենց ազգաբնակչության նշանակալի գերակշռությամբ հանդերձ, լիազորների կոնֆերանսում նույնքան մշտական ներկայացուցիչներ ունեին, որքան և

[1] Տե՛ս „Образование СССР", Сборник документов, 1917—1924, Москва, 1949, էջ 288։

նա։ Այդ իրավահավասարությունը ամրապնդվել էր Միության խորհրդում, որտեղ, ինչպես և հետագայում Անդրֆեդերացիայի Կենտգործկոմում, երեք ներկայացուցիչներից մեկը Հայկական ՍՍՌ ներկայացուցիչն էր։

Իրավահավասարությունը, որը իրագործվում էր լենինյան ազգային քաղաքականության հիման վրա, ապահովում էր Անդրֆեդերացիայի ժողովուրդների միասնությունն ու համախմբվածությունը։ Նրանում մի ժողովրդի շահերի համար, ի վնաս մյուսների, ոչինչ չէր կարող արվել և չէր արվում։ Անդրկովկասի աշխատավորները ավելի ու ավելի էին համոզվում, որ մի միասնական ընտանիքի մեջ միավորվելով, հեշտ է ամրապնդել իրենց ռեսպուբլիկաների անկախությունը, սուվերենությունը, վերականգնել տնտեսությունը, բարելավել ժողովրդի նյութական և կուլտուրական կյանքը։ Ֆեդերացիայի յուրաքանչյուր ռեսպուբլիկայի սուվերենության սահմանափակումները միայն ՍՍՌՄ և ԱՍՖՍՌ կոնստիտուցիաների նշած կետերն էին, միայն ՍՍՌՄ և ԱՍՖՍՌ կոմպետենցիային վերաբերող հարցերը։ Մյուս բոլոր դեպքերում ԱՍՖՍՌ յուրաքանչյուր ռեսպուբլիկան պետական իշխանությունը ինքնուրույն կերպով էր իրագործում։

Ինչպես ԱՍՖՍՌ-ի կազմակերպումից առաջ, այնպես էլ հետո, ռեսպուբլիկայի բարձրագույն մարմինների իրավասությանն էին ենթարկվում՝ կոնստիտուցիայի ընդունումն ու նրանում փոփոխումներ կատարելը, նրա կիրառման վերահսկողությունը, սահմանների և վարչա-տերիտորիալ բաժանումների հաստատումը, քաղաքային, ավանային և գյուղական Սովետների կազմակերպումը, տնտեսական բյուջեի և նրա կատարման մասին տրվող հաշվետվության հաստատումը, պետական կարգ ու կանոնի և քաղաքացիների պաշտպանությունը, աշխատանքային, դատարանական և դատավարական օրենսդրությունը, քաղաքացիական և քրեական օրենսդրությունը և պետական կյանքի բազմաթիվ այլ կարևոր հարցեր։ Սովետների համահայկական համագումարի ընդունած որոշումները այլևս ֆեդերացիայի բարձրագույն մարմինների կողմից հետագա հաստատման կարիք չէին զգում։

Անդրֆեդերացիան և նրա մեջ մտնող ռեսպուբլիկաները իրենց գործունեությունն իրականացնում էին չմիջամտելով իրենց իրավասության մեջ չմտնող խնդիրներին։ Սակայն այդ չէր նշանակում, թե Անդրֆեդերացիայի գործունեությունը սահմանափակվում էր միայն ընդհանուր, իսկ ռեսպուբլիկաներինը՝ յուրահատուկ ազգային խնդիրների շրջանակներում, որովհետև սովետական պայմաններում Միության և նրա անդամների ճիշտ ըմբռնված շահերի միջև ոչ մի հակասություն չկա։

Անդրֆեդերացիայի կոնստիտուցիոն սկզբունքներից մեկը նրա ռեսպուբլիկաների սուվերենության պահպանումն ու պաշտպանումն էր։ ՍՍՌՄ կազմակերպումով նրանց սուվերենությունը լրացուցիչ իրավական ապահովություն և պաշտպանություն ստացավ։

ԱՍՖՍՌ-ի և ՍՍՌՄ-ի կազմակերպումը, չփոխելով Հայկական ՍՍՌ-ի՝ որպես սուվերեն պետության իրավական բնույթը, պահանջեց նրա կոնստիտուցիայում մի շարք փոփոխություններ և լրացումներ կատարել։ Դրանք վերաբերում էին տասներորդ (տեղական իշխանությանը), տասնմեկերորդ (Սովետների ընտրությանը) և տասներկուերորդ (բյուջետային իրավունքին նվիրված) գլուխներին։

Կոնստիտուցիայի 16-րդ հոդվածը ընդգծում էր Հայկական ՍՍՌ-ի ակտիվ դերը Անդրֆեդերացիայի և ՍՍՌՄ ստեղծման մեջ և բացատրում էր, թե ինչ նպատակներով են վերջիններս ստեղծվել։ Նրանում ասվում էր, որ կապիտալիստական շրջապատումից պաշտպանվելու, սոցիալիստական շինարարությունն ու ազգային զարգացումը ապահովելու նպատակով, Հայկական ՍՍՌ-ն, սովետական ռեսպուբլիկաներ Վրաստանի և Ադրբեջանի հետ միասին, կազմում է ԱՍՖՍՌ և նրա միջոցով միավորվում ՌՍՖՍՌ-ին, Ուկրաինական, Բելոռուսական, Թուրքմենական, Ուզբեկական ՍՍՌ-ներին և կազմում Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միությունը։ Կարևոր նշանակություն ուներ կոնստիտուցիայի այն սահմանումը, որ Հայկական ՍՍՌ-ն հանդիսանում է սուվերեն պետություն, որի սուվերենությունը սահմանափակվում է միայն ԱՍՖՍՌ-ի և ՍՍՌՄ կոնստիտուցիաների նշած սահմաններով (հոդվ. 17)։ Հայկական ՍՍՌ-ի սուվերենիտետը հաստատվում էր նաև 18-րդ հոդվածով, որը վավերացնում էր ԱՍՖՍՌ-ի և ՍՍՌՄ կազմից Հայկական ՍՍՌ-ի դուրս գալու իրավունքը, ինչպես և 19-րդ հոդվածով, որը սահմանում էր, որ Հայկական ՍՍՌ-ի սահմանները առանց նրա համաձայնության չեն կարող փոփոխվել[1]։

Հայկական ՍՍՌ Սովետների հինգերորդ համագումարը, հաստատելով ռեսպուբլիկայի կոնստիտուցիայի փոփոխությունների և լրացումների տեքստը, ըստ էության 1927 թվականին նոր կոնստիտուցիա ընդունեց։

ԱՍՖՍՌ և նրա ռեսպուբլիկաների իրավունքների սկզբնական բաժանման մեջ, ինչպես և հետագա փոփոխությունների ժամանակ, նկատի էր առնվում, որ այն պետք է նպաստի ռեսպուբլիկաների ինքնագործունեությանն ու տնտեսական նախաձեռնությանը։ Պարտիան կանգնած էր լենինյան այս սկզբունքի պաշտպանության դիրքերում։ Անդրերկրամի, Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի կենտկոմների աշխատանքի մասին ՀԱՄԿ(բ)Պ Կենտկոմի 1931 թ. հոկտեմբերի 31-ի որոշման մեջ հատուկ ուշադրություն էր դարձված այս ռեսպուբլիկաների և Անդրֆեդերացիայի փոխհարաբերությունների հարցի վրա։

ՀԱՄԿ(բ)Պ ԿԿ-ն նշելով Անդրերկրամի ղեկավարության աշխատանքում տեղ գտած լուրջ թերությունները, ամենից առաջ ընդգծեց, որ նա չի ապահովել անդրկովկասյան ռեսպուբլիկաների նախաձեռնության ծավալումը, տնտեսական և կուլտուրական շինարարության ղեկավարության մեջ չափազանց շատ կենտրոնացում է կատարել, որը մի շարք բնագավառներում հասցրել էր ռեսպուբլիկական մարմինների դիմազրկությանը։ Հստակ կերպով որոշվեցին Անդրֆեդերացիայի և նրա մեջ մտնող ռեսպուբլիկաների իրավասության սահմանները, որի շնորհիվ նոր ուժով ծավալվեց նրանց նախաձեռնությունը տնտեսական-կուլտուրական շինարարության բնագավառում։

Երկրի ազատության և սուվերենիտետի ցուցանիշները առաջադիմության, դեմոկրատիզմի բնագավառում ձեռք բերված հաջողություններն էին, աշխատավորության բարեկեցության աստիճանը, գիտության, կուլտուրայի և այլ բնագավառների նվաճումները։

Հանրագումարի բերելով Անդրկովկասի ժողովուրդների կողմից իրենց ռեսպուբլիկաների սուվերենության կառուցման առաջին արդյունքները և ձևակերպելով նրանց հետագա խնդիրները, Գ. Կ. Օրջոնիկիձեն մատնանշում էր,

---

[1] «Հայկական ՍՍՀ բանվորա-գյուղացիական կառավարության օրենքների և կարգադրությունների ժողովածու», 1928, № 1, բաժին 1, էջ 6։

որ նրանք իրենց անկախությունը կկառուցեն ոչ թե մեկուսացված ձևով, այլ ՍՍՌՄ բոլոր ժողովուրդների հետ միասին։ «...Մենք այսպես ենք մտածում,— ասում էր նա,—կառուցել մեր ռեսպուբլիկաների անկախությունը, նրա տակ տնտեսական ամուր հիմք գցելով, զարգացնելով մեր ռեսպուբլիկաների արտադրողական ուժերը, կառուցելով գործարաններ, ֆաբրիկաներ, ոռոգելով դաշտերը, մեր երկիրը ծածկելով երկաթուղիներով»[1]։

Անդրկովկասի ժողովուրդները հենվում էին ՍՍՌՄ և առաջին հերթին ռուս մեծ ժողովրդի օգնության վրա և զարգացնում էին իրենց երկրի արտադրաուժերը, կառուցում և ամեն տարի շահագործման էին հանձնում նորանոր էլեկտրակայաններ, գործարաններ, ֆաբրիկաներ, երկաթուղիներ, կազմակերպում էին կոլտնտեսություններ, սովխոզներ, հիմնադրում էին դպրոցներ, համալսարաններ, գիտությունների ակադեմիաներ, նրանք իրականացրին կոլտուրական ռևոլյուցիան, ամեցրին ազգային կադրեր, իրենց ռեսպուբլիկաները դարձրին առաջավոր երկրներ՝ բարձր զարգացած էներգետիկայով, դազգահաշինությամբ, սարքաշինությամբ և արդյունաբերության այլ ճյուղերով, բամբակագործությամբ, թեյագործությամբ, խաղողագործությամբ և այլն։

Արդյունաբերության զարգացմամբ Հայաստանը հսկայական թռիչք կատարեց։ 1959 թ. նա 61 անգամ ավելի շատ արդյունաբերական արտադրանք տվեց, քան 1913 թվականին։ Ինակչության մեկ շնչին ընկնող էլեկտրաէներգիայի արտադրությամբ նա իր հետևում թողեց այնպիսի երկրների, ինչպես Ֆրանսիան, Ճապոնիան, Իտալիան։ Հայաստանի գործարանների պիտակները կրող արդյունաբերական ապրանքները արտահանվում են աշխարհի 34 երկրներ, ցուցադրվել են Դամասկոսի, Լայպցիգի, Զագրեբի, Իզմիրի, Բրյուսելի միջազգային ցուցահանդեսների և տոնավաճառների սովետական պավիլիոններում։ Հայաստանի ներկայացուցիչները մասնակցում են միջազգային տեխնիկական կոնգրեսներին և կոնֆերանսներին։ Աննախընթաց զարգացում են ապրում գյուղատնտեսությունը, այգեգործությունն ու խաղողագործությունը։ Միայն 1959 թ. 6 հազար հեկտար խաղողի և այլ այգիներ են տնկվել։ Գյուղատնտեսության բնագավառում ձեռք բերած հաջողությունների համար Հայաստանը 1959 թվականին արժանացավ երկրի բարձրագույն պարգևին Լենինի շքանշանի։

Հայաստանի նվաճումները մեծ են նաև կուլտուրայի բնագավառում։ Նրա պարծանքն է կազմում ռեսպուբլիկայի Գիտությունների ակադեմիան։ Հայաստանի շատ գիտնականների անունները հայտնի են դարձել ՍՍՌՄ սահմաններից շատ ու շատ հեռու։ Ռեսպուբլիկան պատած է դպրոցների խիտ ցանցով։ Հայաստանում այժմ յուրաքանչյուր հազար մարդուն 45 անգամ ավելի շատ սովորող է ընկնում, քան Իրանում, 11 անգամ ավելի, քան Թուրքիայում և 4 անգամ ավելի, քան Ֆրանսիայում։ Նախասովետական Հայաստանում ոչ մի բարձրագույն ուսումնական հաստատություն չկար, այժմ դրանց թիվը 14 է։ Հայաստանում բուհերի լայն ցանցի շնորհիվ որակյալ կադրերի՝ ինժեներների, տեխնիկների, գյուղատնտեսների, բժիշկների, ուսուցիչների, գիտնականների բազմամարդ բանակ է ստեղծվել։ Ռեսպուբլիկայում 1959 թ. դեկտեմբերին աշխատում էին 38400 բարձրագույն կրթություն ունեցող մասնագետներ, այդ թվում՝ 9400 ինժեներներ, 4100 գյուղատնտեսներ և զոոտեխնիկներ, գի-

[1] Г. К. Орджоникидзе, Статьи и речи, т. I, Москва, 1956, էջ 391։

տությունների 158 դոկտորներ և 1431 թեկնածուներ։ Հայաստանի ազգաբնակչությանը սպասարկում են 4200 բժիշկներ և 2900 միջին որակի բժշկական աշխատողներ։

Այսպիսիք են այն անհերքելի փաստերը, որոնք ապացուցում են, թե ինչպես է ամրապնդվել մեր ռեսպուբլիկայի սովետենիտետը։ Սովետական Հայաստանի նվաճումները դարձան այն հզոր ուժը, որը նրա շուրջն է համախմբում արտասահմանյան հայ գաղութների աշխատավորությանը։ Հայաստանի Կոմունիստական պարտիան ամեն ինչ արել ու անում է, որպեսզի արտասահմանյան երկրների աշխատավոր հայության լայն զանգվածները Սովետական Հայաստանի մասին ճշմարտությունն իմանան։ Նրանց համար հրատարակվում է ամսագիր, նրանց համար ուղարկվում են գրքեր, ամսագրեր, Հայկինոյի ֆիլմերը։ Դրա շնորհիվ, հակառակ դաշնակների զրպարտությունների ու հարձակումների, արտասահմանյան բոլոր հայկական գաղութներում Սովետական Հայաստանի ազդեցությունն անընդհատ աճում է։ Այդ իր ցայտուն արտահայտությունն է գտել հայերի՝ Սովետական Հայաստան կատարած հայրենադարձության մեջ։

Հայաստանում սովետական կարգերի հաստատման 40-ամյակի և Հայաստանի կոմունիստական պարտիայի կազմակերպման մասին ՀԿՊ ԿԿ-ի թեզիսներում ասվում է. «Սովետական բոլոր ռեսպուբլիկաների ժողովրդական տնտեսության, կուլտուրայի զարգացման և ժողովուրդների բարեկեցության բարձրացման հոյակապ հաջողություններն ավելի ու ավելի լայն կերպով են արժանանում արտասահմանյան աշխատավորների ճանաչմանը։ Արտասահմանյան երկրներում ապրող ավելի ու ավելի մեծ թվով հայ աշխատավորներ են ձգտում վերադառնալ Սովետական Հայաստան։ Հետպատերազմյան տարիներին մոտավորապես 100 հազար արտասահմանյան հայեր Հայաստան վերադարձան և ակտիվորեն մասնակցում են կոմունիզմի կառուցման մեծ գործին»[1]։

Հայկական ռեսպուբլիկայի և սովետական մյուս ռեսպուբլիկաների կյանքում վերջին յոթնամյակը նշանավորվեց նոր հիանալի նվաճումներով։ Երկրի տնտեսության ու կուլտուրայի վերելքի նոր, հսկա խնդիրները օրակարգում դրեցին միութենական ռեսպուբլիկաների իրավունքների ընդլայնման հարցը։

Այդ նպատակով ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահությունը 1954 թ. դեկտեմբերի 28-ին Կապի համամիութենական մինիստրությունը վերակազմեց միութենական-ռեսպուբլիկական մինիստրության։ Հայաստանում կազմակերպվեց Կապի մինիստրություն։ Մինչ այդ, 1954 թ. ապրիլի 19-ին հրապարակվեց ՍՍՌՄ Գերագույն Սովետի հրամանը՝ ՍՍՌՄ Շինարարության միութենական-ռեսպուբլիկական մինիստրություն կազմակերպելու մասին, իսկ Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության հրամանով՝ ռեսպուբլիկայի Շինարարության մինիստրությունն։ Հայաստանում վերոհիշյալ մինիստրությունների կազմակերպման հետ մեկտեղ, 1954—1955 թթ. միութենական ենթակայությունից ռեսպուբլիկական ենթակայությանը հանձնվեցին զգալի թվով ձեռնարկություններ։ Միութենական ռեսպուբլիկաների իրավունքների ընդլայնման պլանի համաձայն զգալի միջոցառումներ իրագործվեցին և 1955 թվականին։ ՍՍՌՄ Մինիստրների Սովետը և ՍՄԿՊ ԿԿ-ն

[1] «Հայաստանում Սովետական իշխանության հաստատման և Հայաստանի Կոմունիստական պարտիայի կազմավորման 40-ամյակը (1920—1960 թթ.)», էջ 27։

1955 թ. մարտի 9-ին որոշում ընդունեցին «Գյուղատնտեսության պլանավորման պրակտիկայի փոփոխման մասին»։ Այդ որոշմամբ վերացվեց տնտեսության այդ ճյուղի պլանավորման չափից ավելի կենտրոնացումը։ Նոր կարգի համաձայն պլանավորումը սկսվում է անմիջապես կոլտնտեսություններում ու սովխոզներում և կատարվում է հաշվի առնելով հողատարածությունների լավագույն օգտագործման հնարավորությունը։ Այնուհետև վերացվեց միութենական ռեսպուբլիկաների ժողովրդական տնտեսության պլանավորման և ֆինանսավորման ավելորդ կենտրոնացումը։ Այդ խնդիրը լուծվեց ՍՍՌՄ Մինիստրների Սովետի 1955 թ. մայիսի 4-ի՝ «Միութենական ռեսպուբլիկաների պետական պլանավորման և ֆինանսավորման կարգի փոփոխման մասին» որոշմամբ։ Այդ, ինչպես և «Գյուղատնտեսության պլանավորման պրակտիկայի փոփոխման մասին» որոշումները, միութենական ռեսպուբլիկաներին, այդ թվում և Հայաստանին մեծ ինքնուրույնություն տվեցին։

ՍՄԿՊ XX համագումարը հավանություն տվեց միութենական ռեսպուբլիկաների իրավունքների ընդլայնման ուղղությամբ կատարված միջոցառումներին, որոշելով չընդհատել այդ ուղղությամբ կատարվող հետագա աշխատանքները։

Համագումարի բանաձևում ասվում է. «Միութենական մինիստրություններին թողնելով ընդհանուր ղեկավարումը, պլանային առաջադրանքների սահմանումը, դրանց կատարման վերահսկողությունը, սարքավորման մատակարարումը, կապիտալ ներդրումների ֆինանսավորումը, միևնույն ժամանակ անհրաժեշտ է իրականացնել ռեսպուբլիկական մինիստրությունների իրավունքների հետագա ընդլայնում՝ ձեռնարկությունների ամենօրյա ղեկավարման ասպարեզում։ Դա կնպաստի տեղերում ստեղծագործական նախաձեռնության է՛լ ավելի ծավալմանը, մեր երկրի ժողովուրդների բարեկամության ամրապնդմանը»[1]։

Միութենական ռեսպուբլիկաների իրավունքների հետագա զարգացմանը նպաստող ետհամագումարյան միջոցառումների թվում կարևոր տեղ է գրավում ՍՄԿՊ ԿԿ-ի և ՍՍՌՄ Մինիստրների Սովետի 1956 թ. մայիսի 30-ի որոշումը՝ «Ժողովրդական տնտեսության մի շարք ճյուղերի ձեռնարկությունները միութենական ռեսպուբլիկաների տնօրինությանը հանձնելու և դրա հետ կապված կազմակերպական հարցերի մասին»։ Այդ որոշման անմիջական արդյունքը Հայաստանում եղավ այն, որ բարելավվեց ռեզերվների օգտագործումը և ավելացավ ռեսպուբլիկայի արդյունաբերական արտադրանքը։

Միութենական ռեսպուբլիկաների իրավունքների ընդլայնումը ժողովրդական տնտեսության զարգացման և նրա ղեկավարման բարելավման կարևոր ազդակ հանդիսացավ։ Այդ իմաստով էլ ավելի մեծ նշանակություն ունի ՍՍՌՄ Գերագույն Սովետի 1957 թ. մայիսին ընդունած «Արդյունաբերության և շինարարության ղեկավարության կազմակերպման հետագա կատարելագործման մասին» որոշումը։ Այդ որոշման համաձայն, միութենական ռեսպուբլիկաների իրավասությանը հանձնվեցին նրանց տերիտորիաների արդյունաբերության և շինարարության ղեկավարման հարցերը, ստեղծվեցին իրենց լիովին արդարացրած ժողտնտխորհները։

---

[1] «ՍՄԿՊ 20 րդ համագումարի բանաձևը», Երևան, Հայպետհրատ, 1956, էջ 26։

1959 թվականին միութենական ռեսպուբլիկաների իրավունքները ընդլայնվեցին ևս երկու կարևոր՝ տնտեսական և կուլտուրական շինարարության բնագավառներում։ Այդ պահից սկսած զգալիորեն ընդլայնվել են նրանց բյուջետային իրավունքները և նրանց է հանձնվել բոլոր բարձրագույն և միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների ղեկավարությունը։ Տնտեսական-կուլտուրական շինարարության ղեկավարությունը միութենական ռեսպուբլիկաներին հանձնելը, նրանց բյուջետային իրավունքների ընդլայնումը՝ միութենական ռեսպուբլիկաների ինքնուրույնության ուժեղացման ամենակարևոր ցուցանիշներն են։

Զգալիորեն ընդլայնվել են միութենական ռեսպուբլիկաների իրավունքները օրենսդրության բնագավառում։ Նրանց տնօրինությանն են հանձնվել օրենսդրության մի շարք հարցեր, որոնք մինչ այդ մտնում էին ՍՍՌՄ իրավասության մեջ, մասնավորապես ռեսպուբլիկաների վարչա-տերիտորիալ կառուցվածքի հարցը։

Միութենական ռեսպուբլիկաների սովերեն իրավունքների հետագա ընդլայնման, միութենական ղեկավարությանը նրանց ներկայացուցիչների անմիջական մասնակցության, տնտեսության ու կուլտուրայի զարգացման մեջ միութենական ռեսպուբլիկաների պատասխանատվության բարձրացման, սոցիալիստական օրինականության պահպանման տեսակետից մեծ նշանակություն ունի սահմանադրորեն հաստատված այն դրությունը, որի համաձայն ՍՍՌՄ Մինիստրների Սովետի մեջ ի պաշտոնե մտնում են միութենական ռեսպուբլիկաների մինիստրների սովետների նախագահները, իսկ ՍՍՌՄ Գերագույն դատարանի մեջ՝ նրանց գերագույն դատարանների նախագահները։

Շնորհիվ այս միջոցառումների, որոնք ուղղված են միութենական ռեսպուբլիկաների սովերեն իրավունքների ընդլայնմանը և ռեսպուբլիկական ու համամիութենական գործերում նրանց դերի բարձրացմանը, էլ ավելի աճեց ՍՍՌՄ ժողովուրդների փոխադարձ վստահությունը, սերտ համագործակցությունն ու բարեկամությունը։

Վերջին յոթ տարիների ընթացքում միութենական ռեսպուբլիկաների սովերեն իրավունքների ընդլայնումը չի նշանակում հրաժարումն այն պահանջների իրագործումից, որոնք միասնական են ողջ Միության համար, չի թուլացնում, այլ ընդհակառակը, էլ ավելի է հզորացնում Սովետական Սոցիալիստական բազմազգ պետությունը, ինչպես և սոցիալիստական ազգերի առանձնահատկությունների ճանաչումը, ուշադիր վերաբերմունքը նրանց տրադիցիաներին, սովորույթներին, ոչ թե թուլացնում, այլ ուժեղացնում է սոցիալիստական ազգերի մերձեցումը և նրանց պետականությունը։

Լենինյան ազգային քաղաքականության հետևողական իրագործման պրոցեսում ապահովվեց սոցիալիստական ազգերի, նրանց պետականության, տնտեսության և կուլտուրայի աննախընթաց ծաղկումը։ Տնտեսական ընդհանուր կառուցվածքի, տնտեսական և քաղաքական ձգտումների միասնության, մարքսիստական-լենինյան միասնական գաղափարախոսության և քաղաքականության շնորհիվ այս բոլոր բնագավառներում անշեղորեն կատարվել և կատարվում է սոցիալիստական ազգերի մերձեցումը։

Սովետական բազմազգ պետությունը, որը ստեղծվել է մեր երկրի ժողովուրդների, այդ թվում իրավահավասար հայ ժողովրդի կողմից, Սովետական Հայաստանի ազատության և անկախության կայուն գրավականն է, սոցիա-

լիստական հայ ազգի ծաղկման աղբյուրը, հայ ժողովրդի, այդ թվում արտասահմանյան հարյուր հազարավոր հայերի լավագույն հույսերի և ձգտումների մարմնացումը։ Հայ ժողովուրդը գիտե, որ իր ռեսպուբլիկայի ազատությունը, անկախությունը, պետականությունը, էկոնոմիկայի և կուլտուրայի ծաղկումը արդյունք են լենինյան ազգային քաղաքականության, որը հենվում է ժողովուրդների բարեկամության վրա։ Ահա թե ինչու նա երբեք և ոչ ոքի թույլ չի տվել և թույլ չի տա խախտելու Սովետական Միության մյուս ժողովուրդների հետ արյունով և սոցիալիստական աշխատանքով զոդված միությունը, ժողովուրդներ, որոնց հետ սերտ միացած նա կառուցեց սոցիալիզմը և այժմ կառուցում է կոմունիստական հասարակություն։

ВОЗНИКНОВЕНИЕ И РАЗВИТИЕ СУВЕРЕННОГО АРМЯНСКОГО СОВЕТСКОГО ГОСУДАРСТВА

А. З. БЕГИЯН

(Резюме)

Сорок лет назад армянский народ, опираясь на помощь и поддержку великого русского народа и других народов Рэссии, навсегда освободил свою страну от внутренних и внешних поработителей, создал, упрочил, а затем развил свое свободное суверенное национальное государство. Создание и развитие суверенного армянского Советского государства является ярким выражением политики, теории и программы ленинизма по национальному вопросу, торжеством учения В. И. Ленина о государственно-правовых формах разрешения национального вопроса в нашей стране. Основой эснов государственного бытия Армянской ССР было, есть и будет растущее единство, постоянное сближение советских народов, как закономерное закрепление и развитие сложившегося в конце XIX и в начале XX вв. нераздельного рабочего и революционного движения в России.

Создание Закавказской федерации и СССР не только не умалило независимость Армянской республики, а, наоборот, усилило значение этой независимости, явилось ее гарантией, При размежевании компетенции ЗСФСР и республик в основу ставилось требование партии о развертывании самодеятельности и хозяйственной инициативы республик. Закавказская федерация сыграла огромную роль в хозяйственном и культурном возрождении закавказских республик, братского содружества между ними и подгэтовила почву для непосредственного вхождения Армении, Азербайджана и Грузии в состав СССР.

Важнейшим этапом в развитии суверенного армянского советского государства является нынешний период развернутого строительства коммунизма. Одной из закономерностей этого периода является расширение прав союзных республик и растущее сближение советских национальных республик. Коммунистическая партия и ее ленинский Центральный Комитет разработали и осуществили широкую программу расширения прав со-

юзных республик, усиления их роли в управлении народным хозяйством, культурным строительством, а также в области законодательства и места их в демократическом управлении всеми сторонами народной жизни всей нашей страны.

Расширение прав союзных республик не означает отказа от проведения требований, являющихся едиными для всего Союза, не ослабляет, а, наоборот, еще более усиливает многонациональное Советское социалистическое государство, так же как и требование об учете особенностей социалистических наций, по-ленински внимательном отношении к их традициям, обычаям, не отменяет, а, напротив, усиливает разностороннее сближение социалистических наций. Созданный народами нашей страны, в том числе равноправным армянским народом, Союз Советских Социалистических Республик является прочной гарантией свободы и суверенности Советской Армении, источником ее дальнейшего процветания. Армянский народ знает, что его счастье основано на вечной и нерушимой дружбе с великим русским народом. Естественным является то, что армянский народ никогда и никому не позволял нарушить спаянный кровью и социалистическим трудом союз с великим русским народом и другими народами Советского Союза, с которыми он завоевал социализм и теперь успешно строит коммунистическое общество.